16485

361
4-76

1915

7056

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻ ԱՆՎԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻ ՃԻՒՂԻ

ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ

1914 Թ.

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

15394

361
4-76

ԹԻՖԼԻՋ
Տպարան Ն. Աղանեանի Պօլից. 7
1915

2010

2002

361
Կ-76 կ
370
Զ450-ՏԵ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԻՆ ԱԳՈՒԼԻՍԻ ՃԻՒՂԻ

1914 Թ.

ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ.

Սոյն 1914 թուին ևս Կ. Հ. Բ. Ընկ. Վ.-Ագուլիսի ճիւղն իր գոյութիւնը շարունակել է Վարչութեան նախկին կազմով և եռանդի ու գործի սիրոյ նոյն թափով։

Տարեայ սկզբից Վարչութիւնն ունեցել է հետևեալ կազմը.—

Նախագահ—Աղեքսանդր Աւ. Տէրեան

Փոխ-նախագահ—Պօղոս Յովհ. Աղամիրզեան

Անդամներ { Աւետիս Առաք. Ներսիսեան
Մինաս Ն. Մարգարեան

Դանձապահ-քարտուղար անդամ—Գրիգոր Ղ. Ղազարեան

Փոխ-անդամներ { տիկ. Դայիանէ Ս. Քալանթարեան
տիկ. Դայիանէ Շ. Տէր-Յովհաննիսեան

Վերստուգիչ Յանձնաժողովի կազմը.

Մինաս Նուսնուսեան
Յակոբ Տէր-Յակոբեան
Յովհաննէս Տէր-Զաքարեան։

Ընկերութեան Կանոնադրութեան VIII, § *60-ի համաձայն Վարչութեան անդամներից վիճակով իրենց պաշտօնը թողնող Աղեքսանդր Ա. Տէրեան և Մինաս Ն. Մարգարեան 1914 թուի Յուլիսի 10-ի ընդհանուր ժողովում բացարձակ ձայնատուութեամբ վերընտրուեցան կրկին շարունակելու իրենց պաշտօնը։ Նոյն ժողովում վերընտրուեցան նաև վերստուգիչ Յանձնաժողովի անդամները—Մինաս Նուսնուսեան և Յովհաննէս Տէր-Զաքարեան, իսկ Յակոբ՝Տէր-Յակոբեանի տեղ—պաշտօնով Երևան տեղափոխուելու պատճառով—ընտրուեց Յարութիւն Թ. Քալանթարեան. փոխ-անդամներ ընտրուեցան Յարութիւն Բարխուդարեան և Գասպար Բարխուդարեան։*

Հերթական առաջին նիստում Վարչութիւնը Ընկ. կանոնադր. VIII, § *59-ի հետևանքով վերընտրեց Վարչութեան պաշտօնատար անձանց նոյն կազմով, ինչպէս գործել է առաջ և որ յիշած է վերևում։*

Նախագահ Աղեքսանդր Աւ. Տէրեանի բացակայութեան միջոցին, տարեայ երկրորդ կիսամեակում, նրան փոխարինել և նախագահութեան պար-

տաւորութիւններն է ստանձնել ու կատարել փոխ-նախագահ Պողոս Աղամիրզեան։ Իսկ Վարչութեան կազմից Աւետիս Առաք. Ներսիսեանի երկրատեւ և Աղ. Ա. Տէրեանի կիսամեայ բացակայութեան միջոցին Վարչութեան կազմը լրացրել են փոխ-անդամներ տիկնայք՝ Գայիանէ Ս. Քալանթարեան և Գայիանէ Շ. Տէր-Յովհաննիսեան։

Տարւայ ընթացքում Վարչութիւնն ունեցել է հինգ խորհրդակցական նիստ, միշտ լրիւ կազմով և մէկ ընդհանուր ժողով, Յուլիսի 10-ին, Վարչութեան հրաւէրով, կատարելու լրացուցիչ ընտրութիւններ, քննելու 1913 թւի հաշիւը և զեկուցումն լսելու 1914 թւի հաշւի ու գործավարութեան բարեկարգման խնդրի մասին։

ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ.

Ներկայ հաշւետու տարւայ ընթացքում Վարչութիւնը ցոյց է տուել հետևեալ գործունէութիւնը։

I Պահպանել է գրադարան—ընթերցարան.
II Ընդարձակել ճիւղի միջոցները.
III Կապ հաստատել ճիւղի գործակալների հետ.
IV Կանոնաւորել նպաստների աւելի լայն բաշխումը.
V Կազմակերպել մի հասարակական զբօսանք, յօգուտ ճիւղի.
VI Միջնորդութիւն յարուցել օժանդակելու երկու դպրոցի։

I. Գրադարան-ընթերցարան.

Գրադարան-ընթերցարանը հիմնաւորուած ու գործում էր անցեալ 1913 թւից։

Իր գոյութեան առաջին իսկ քառամսեակում գրադարանն արդէն բաղկացած էր՝ հայերէնի, ռուսերէնի և ֆրանսերէնի—երեք զատ-զատ բաժիններից—1115 կտոր գրքերով ընդամենը։ Ներկայ հաշւետարում աւելի ճոխանալով գրադարանը հարստացաւ նոր նւիրաբերութիւններով, որոնցով տարւայ վերջին գրադարանը հասաւ հետևեալ վիճակի.

Ա.—Հայերէնի բաժնում կայ . . 1030 կտոր գիրք.
Բ.—Ռուսերէնի բաժնում կայ . 190 կտոր գիրք.
Գ.—Ֆրանսերէնի բաժնում կայ . 200 կտոր գիրք.

Ընդամենը . 1420 կտոր գիրք, մոս 100-ն անկազմ։

Ուրեմն 14 թւին գրադարանը հարստացել է 300 կտորից աւելի նոր նւիրուած գրքերով։ Ներկայ տարում գրադարանի համար ստացուել են հետևեալ նւէրները.

1. Պ. Սարգիս Թ. Հախնազարեանից—հանգ. կնոջ՝ տ. Նունէ Հայրապ. Հախնազարեանցի յիշատակին նւիրած մէկ հարիւր ռուբլու հաշւին հայերէն գրքեր . . . . . 115 կտոր

2. Գրավաճառ Պ. Գալուստ Գալստեանից 30 ռուբլի արժողութեամբ, հայերէն գրքոյկներ . . . . . 100 կտոր
3. Բժիշկ Պ. Արիստակէս Հայրապ. Զարգարեանից—18 ռ. արժողութեամբ, 16 անուն մանկական պատկերազարդ գրքոյկներ Յովհ. Թումանեանի երկերից, բաժանելու դպրոցի սաներին 62 »
4. Պ. Արշակ Կար. Աղամիրզեանից . . . . . 1 »
5. Պ. Գասպար Կար. Բարխուդարեանից, կազմած . . 1 »
6. Պ. Կարէն Սար. Միքայէլեանից «Նոր-Հոսանք»-ի 1913 թւի №№ 3, 4—5 և 6-ը . . . . . 3 »
7. Պ. Մկրտիչ Պող. Աղամիրզեանից—Բագւից, ռուսերէն մանր գրքոյկներ . . . . . 51 »
8. Պ. Մկրտիչ Բարխուդարեանից, Մոսկւայից ռուսերէն . 2 »
9. Պ. Արսէն Բուդաղեանից, Մոսկւայից, ռուսերէն . . 1 »
10. Ընթերցարանի համար ստացւող պարբերականների հայերէն և ռուսերէն յաւելւածներից . . . . . 14 »

Նոր նւիրուած գրքեր ընդամենը 350 կտոր։

Բոլոր արգոյ նւիրատուներն էլ արժանի են առանձնայատուկ ու խորին շնորհակալութեան։

Գրադարան-ընթերցարանից օգտւել են անխտիր-թէ ճիւղի անդամները, թէ ոչ-անդամներ, թէ ուսանողութիւնը և՛ թէ օտարներ։

Ընթերցանութեան պահանջն աւելի զգալի էին ձմեռւայ և ամառւայ ամիսներում, մանաւանդ, երբ բազմութիւնը համեմատաբար աւելի մեծ էր Ագուլիսում, այն ևս մասնաւորապէս ուսանողութեան շրջանում։ Այդ պատճառով էլ ամառային սեզոնում գրադարանից օգտւողների մեծ թիւը կազմել է տեղիս աշակերտ-ուսանողութիւնը։

Հայերէն գրքերի պահանջները աւելի դիւրութեամբ էին բաւարարւում, որոշ չափով. սակայն անհամեմատ աւելի մեծ էին դիմումները ռուսերէն գրքերի համար, որոնց բաւարարել անհնարին էր լինում, գրադարանի այդ բաժնի խիստ աղքատ լինելու պատճառով, որի վրայ և հրաւիրում ենք օտարարնակ ագուլեցոց ուշադրութիւնը։

Տարւայ ընթացքում գրադարանից պարբերաբար, ըստ որում և ընթերցարանից, օգտւել են 62 բաժանորդ անդամներ, իսկ ընթերցարանից—աւելի մեծ թւով յաճախողներ, վճարելով մուտքի համար, սակայն, ընդհանրապէս, ընթերցարան յաճախողների մեծամասնութիւնն ևս եղել են գրադարանի բաժանորդները՝ իրանց ընտանիքի անդամներով։

Այդ բաժանորդներին տրւած են ընթերցանութեան գրքեր երեք լեզւով մօտ հազար կտոր.—հայերէն 792 կտոր, ռուսերէն 123 կտոր, ֆրանսերէն 43 կտոր, միասին 958 կտոր—տանը կարդալու. գրադարանում ևս տրւած են կարդալու հայերէն 38 կտոր, որոնց ընդհանուր գումարը հաւասար է 996 կտորի։ Այդ բոլորը վերածելով ամիսների կարգի կստացւի հետևեալ ցանկը.

1. Յունուարին տրված են 76 կտոր.
2. Փետրուարին » » 135 »
3. Մարտին » » 108 »
4. Ապրիլին » » 47 »
5. Մայիսին » » 68 »
6. Յունիսին » » 141 »
7. Յուլիսին տրված են 156 կտոր.
8. Օգոստոսին » » 38 »
9. Սեպտեմբերին » » 6 »
10. Հոկտեմբերին » » 19 »
11. Նոյեմբերին » » 84 »
12. Դեկտեմբերին » » 118 »

1914 թուին ընթերցարանի համար ամբողջ տարով ստացված են հետևեալ 20 պարբերականներն իրանց բոլոր յաւելվածներով—հայերէն և ռուսերէն—

1. Մշակ *)
2 Հորիզոն
3. Արև *)
4. Արարատ
5. Նոր-Հոսանք
6. Հասկեր
7. Աղբիւր
8. Տարազ
9. Մախլաս
10. Խաթաբալա
11. Գիւղատնտես*)
12. Кавказъ
13. Русское Слово
14. Искры
15. Вѣстникъ Знанія
16. Недѣля
17. Пробужденіе
18. Родина
19. Огонекъ
20. Солнышко.

Սոյն պարբերական հրատարակութիւններից աստղանիշ կրողները նուիրել են ճիւղին, իսկ միւսները—ստացված են Վարչութեան միջոցներով։

1. Մշակ և Գիւղատնտես—տիկ. Սոֆիա Պ. Գէորգեանցի միջոցով նուիրել են մի խումբ թիֆլիզաբնակ զոկ տիկիններ իրանց մեծանուն հայրենակից հանգուցեալ Ալէքսանդր Հայրապ. Քալանթարի յիշատակին։
2. Արեւը բոլոր իր նախորդներով—Բագուի օրաթերթերը—ամբողջ տարով նուիրել է բագուաբնակ տիկին Գայիանէ Յար. Բաղդիեան։
3. Огонекъ—նուիրել է պ. Նիկողայոս Մալեանց։

Ջերմագին շնորհակալութիւններ նաև սոյն պատարժան նուիրատուներին։

Գրադարան-ընթերցարանի պատասխանատու ներկայացուցիչն էր Վարչութեան նախագահ պ. Աղեքսանդր Աւ. Տէրեան, իսկ դեկավար-կառավարիչը Վարչութեան անդամ պ. Գրիգոր Ղ. Ղազարեան։

II. Ճիւղի միջոցները

Միջոցները, որոնցով պահպանւում է ճիւղը, երկու են — մնայուն և ընթացիկ։

1. Մնայուն են այն երեք գումարները, որոնք յատուկ նուիրաբերութիւններ են որոշակի նպատակներով, դրանք են.—

Ա.—պ. Գարեգին Մելիք-Մարութեանի նուիրագրամը, որի տոկոսներն են միայն գործադրւում ընթացիկ տարում . . . 1000 ռուբլի.

Բ.—Սեպհական շինութեան ֆոնդ, յատկապէս ճիւղի համար . . . . . 1000 ռուբլի և

Գ.—Մնայուն ֆոնդ, որ ընդարձակւում է տարէցտարի, ճիւղի գոյութիւնն ամուր ու հաստատուն պահպանելու համար . . . . . 133 ռ. 27 կոպ.

Մնայուն գումարներն էին տարեվերջին, ընդամենը 2133 ռ. 27 կոպ.

Այս յատուկ գումարների աճեցումից զատ՝ Վարչութեան ամենամեծ հոգսերից մէկն էլ եղել է զարկ տալ ընթացիկ գումարների բազմացման կարևոր խնդրից, որի համար չի խնայված և ոչ մի ջանք, յօգուտ ճիւղի յարատև գործունէութեան և բարգաւաճման, որպէսզի կարելի լինի նպատակի հասնել և իրական գործ կատարելու հնարաւորութիւն ունենալ։

2. Ընթացիկ գումարներ.—Վարչութեան ջանքերն այս տարի այդ իմաստով էլ պսակւել են զուտ 989 ռ. 96 կոպ. գումարի գանձմամբ, որից 55 ռ. 30 կոպ. աւելացրած է մնայուն ֆոնդի վրայ, 206 ռ. 55 կոպ. կանխիկ դրամով անցել 1915 թուի հաշուին և 728 ռ. 11 կոպ. էլ ծախսւած է հաշուետու 1914 թուի ընթացքում։

Այսպիսով ահա մնայուն և ընթացիկ գումարները միասին 1914 թուին հասել են 3105 ռ. 89 կոպ. պատկառելի գումարի, որպիսի մուտք ճիւղը չի ունեցել նախորդ տարիներում։ Ուրեմն ճիւղի գումարները և եկամուտը աւելացել և աւելանում են իւրաքանչիւր տարի։

III. Գործակալութիւններ

Վարչութիւնը միշտ համոզված է եղել հաստատապէս, թէ միմիայն իւր իսկ անձնական ջանքերը բաւական չեն իրականացնելու ճիւղի նպատակադրած ձգտումները։ Ուստի՝ ագուլեցիների սաւար մեծամասնութեան օտար վայրերում հաստատված լինելու պատճառով պահանջ էր ներկայանում, բնականօրէն, որոշ կենդրոնավայրերում ունենալ ճիւղի համար աշխատակից-անդամներ,—գործակալ—ագենտներ,—որոնք և իրանց յանձնարարված պարտաւորութիւնները տարել են սիրայօժար, ի սէր և ի շահ իրենց հայրենիքի լուսաւորութեան։ Նրանք են, որ կամ նուէրներ են գանձել իրանց շրջանում, կամ առաջ տարել անդամագրութիւնը հեռաւոր, օտար վայրերում և կամ նպաստել՝ իրանց հեղինակութեամբ՝ զոկական երեկոյթների արդիւնքներից բաւական խոշոր գումարների ճիւղիս յատկացուելուն։

Այդ արգոյ աշխատակից-գործակալներն են.— Պ. Կարէն Ս. Միքայէլեան Մոսկվայում,—տիկ. Սոֆիա Պ. Գէորգեան և բժիշկ պ. Արիստակէս Հայր. Զարգարեան—Թիֆլիզում,—պ. Մկրտիչ Պող. Աղամիրզեան—Բագուում,—պ. Զաքարիա Մկ. Տէր-Զաքարեան—Կոկանդում,—պ. Տիգրան Յովհ. Բէգլարեան—Մերվում և պ. Աւետիս Մահտեսի Ստեփանեան—Ռստամքուլայում (Պարսկաստան)։

Ջերմագին շնորհակալութիւններ ու խորին յարգանք այդ արգոյ աշխատակիցներին։

Այդ բարեսիրտ անհատների ջանքերին պիտի վերագրել և այն կարևոր հանգամանքը, որ 1914 թւին ևս նէէրներն իրանց քանակով էլի ուրոյն, խոշոր տեղ են գրաւում ճիւղի եկամուտների մէջ—352 ռուբլի 90 կոպէկ։

Ուշագրաւ է նաև անդամավճարների գանձումը, որին նոյնպէս ջերմ մասնակցութիւն են ունեցել մեր աշխատակիցները և անդամագրութիւնը չի ընդհատուել Թիֆլիզում, Բագուում ու Կոկանդում, այդ հեռաւոր վայրերում իսկ։

1911 թւին ճիւղն ունեցել է 132 իսկական վճարող անդամներ, որոնցից երկուսական ռուբլով ստացուել է 264 ռուբլի անդամակցական վճար։

Իսկ Մոսկվայի և Թիֆլիզի «Զոկական երեկոյթներից պ. բժ. Զարգարեանի և պ. Կ. Միքայէլեանի միջոցով ստացուել է ընդամենը 240 ռուբլի։

IV Նպաստների բաշխումն

Ներկայ տարում բաշխուած նպաստները, նայած իրանց տեսակին, բաւական բազմապիսի են և ճիւղի ծախսերի հաշուում երկրորդ տեղն են բռնում, ըստ իրանց քանակի—զրադարան-ընթերցարանի պահպանութեան համար գործադրուած գումարից [illegible]4 ռ. 39 կոպ. յետոյ—246 ռ. 72 կոպ.

Թէպէտև ճիւղի միջոցները, համեմատաբար, շատ սահմանափակ են եղել, սակայն Վարչութիւնը չի վարանել, իր կարողութեան չափով, արձագանք տալու եղած կամ ներկայացած պահանջներին ու կարիքներին. մի կարևոր հանգամանք, որ ճիւղի գործունէութեան կէտ նպատակին է և ձրգտումների առանցքը։

Բաշխուած են հետևեալ նպաստներն ու օժանդակութիւնները.—

Ա. Զքաւորներին և տեղիս գաղթականներին . . .	95 ռ. — կ.
Բ. Վիրաւոր և պահեստի զինուորների օգտին . . .	78 » 15 »
Գ. Դպրոցի չքաւոր աշակերտութեան զգեստի . . .	38 » 57 »
Դ. Ագուլիսի դպրոցին տրուած նպաստ	25 » —
Ե. Պետերբուրգի ուսուցչական Հանրակացարանին .	10 » —

Նպաստներ բաշխուած են գումարով 246 ռ. 72 կոպ.։

Այս բաշխումների մանրամասնութիւնները կարելի է դիտել հաշուում։

V. Հասարակական զբօսանք

Վարչութիւնը սովորութիւն է դարձրել իւրաքանչիւր տարի, ամառային ամիսների ընթացքում, Ս. Թովմա Առաքելոյ վանքի բակում, կազմակերպել հասարակական շքեղ դրատիցիոն—զբօսանք յօգուտ ճիւղի միջոցների բարելաւման, որպէսի զբօսանքի կազմակերպման միջոցին երևան են գալիս ուսանողութեան և տեղիս երիտասարդ սերունդի աչակից ձեռնտուութիւնը։ Միևնոյն ժամանակ և այդ զբօսանքներն իրենց ամբողջութեամբ յայտարար են դառնում այն ուժեղ համակրութեան, որ ճիւղը վայելում է տեղիս գիտակից շրջանում։

1914 թւին ևս կազմակերպուած է նման զբօսանք, Յուլիսի 20-ին, որից, բոլոր ծախսերը ծածկելուց յետոյ, գոյացել է զուտ արդիւնք մօտ 115 ռուբ.։

VI. Օժանդակութիւն հարեւան դպրոցներին

Իր հերթին Վարչութիւնը կարևոր է նկատում սրտագին շնորհակալութիւն յայտնել և Ընկ. Խորհուրդին, նրա մի շատ նշանակալից կարգադրութեան առիթով։

Տարւայ ընթացքում Վարչութիւնը քանիցս առիթներ է ունեցել տեղեկացնելու Պատուարժան Խորհուրդին այն սերտ շփումների ու մերձակայ յարաբերութեանց մասին, որ պահպանում է Վարչութիւնը իւր հարևան դպրոցների միջև, զանազան առիթներով։ Այդ շփումների միջոցով ծանօթանալով դպրոցների դրութեանց ու պահանջների հետ, Վարչութիւնը միջնորդութիւն յարուցեց Արգոյ Խորհրդի առաջ Ագուլիսի Ճիւղի միջոցով օժանդակելու Օրդուբաթի դպրոցին 300 ռ. և Ալահի գիւղի դպրոցին 150 ռուբլով տարեկան, 450 ռուբլի։

Այս միջնորդութիւնը ի պատիւ Խորհրդի յարգեցաւ վերջնիս կողմից և որոշուած օժանդակութիւնը յիշեալ դպրոցներին, Ագուլիսի Վարչութեան միջոցով, պիտի մատակարարուի առաջիկայ 1915 թւի ընթացքում։

Շնորհակալութիւն Խորհրդին այս խորին ուշադրութեան համար։

ՆԱԽԱՀԱՇԻՒ ԳՈՐԾԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Համեմատութեան առնելով հաշուետարու նախահաշիւն ու ելմուտը տեսնում ենք, որ ծախսերը միշտ տրուած են հաւատարիմ մնալով նախահաշիւին և ընդհանուր ու վարչական ժողովների որոշումներին, որոնք իրագործուած են հետևեալ ձևով։

Մինչ նախահաշիւով սպասւում էր մուտք ու ելք 510 ռ. և յատուկ գումարներ 2073 ռ. 50 կոպ.—ընդամենը 2583 ռ. 50 կ., 1914 թւի մուտքն ու ելքը յատուկ գումարներով հաւասարուել է 3105 ռ. 89 կոպէկի, որից որպէս

մնացորդ անցնում են 1915 թվին—կանխիկ դրամով 206 ր. 55 կոպ. և յատուկ գումարներ 2133 ր. 27 կոպ.։

Ուրեմն 14 թվին ստացել է՝ զուտ եկամուտ 989 ր. 96 կոպ. և 13 թվի հաշվի մնացորդը—յատուկ գումարներ և կանխիկ 2115 ր. 93 կոպ.։ Սորա համեմատութեամբ էլ ելքը եղել է—զուտ 766 ր. 07 կոպ., դրամական մնացորդ 15 թվի համար 206 ր. 55 կ. և յատուկ գումարներ 2133 ր. 27 կոպ.։ Կը նշանակէ զուտ մուտքը նախահաշվից աւելացել է 479 ր. 96 կոպ. այն էլ գլխաւորապէս նվէրներից. իսկ ելքը—256 ր. 07 կոպ., բացի այն, որ 55 ր. 30 կ. աւելացրած է մնայուն ֆոնդի վրայ և առ 1-ն Յունվարի 1915 թվի էլ մնում է 206 ր. 55 կոպ. կանխիկ դրամ և 2133 ր. 27 կոպ. յատուկ գումարներ։ Այս կերպ ահա Վարչութիւնը 14 թվի սկզբին ունենալով յատուկ և կանխիկ գումարներ 2115 ր. 93 կոպ. առանց վնասի փակել է իր հաշիւներն ու 14 թվի գործունէութիւնը համարձակութեամբ և առ 1-ն յունվարի 15 թվի ունի 223 ր. 89 կոպ. զուտ յաւելումն։

Համեմատաբար մեծ ծախս է եղել գրադարան-ընթերցարանի պահպանութեան վրայ—304 ր. 39 կոպ., թէև նախահաշվով որոշված էր 267 ր., ուրեմն 37 ր. 39 կոպ. աւելի։ Չը պէտք է մոռանալ, սակայն, որ այս հաշվի մէջ է մուծված նաև ընդհանուր գործավարութեան համար վճարված 80 ռուբլին, համաձայն Յուլիսի 10-ի ընդհանուր ժողովի որոշման, որպիսի հանգամանք չէր կանխատեսված նախահաշվում։ Եթէ այս 80 ր. էլ հանենք ծախսված 304 ր. 39 կ.-ից, մնացած 224 ր. 39 կոպէկը նախահաշվի 267 ռուբլուց էլ կը պակսի 42 ր. 61 կոպ.։

Ծախսերի մէջ երկրորդ մեծ տեղն են բռնում բաշխված նպաստներն ու օժանդակութիւնները—246 ր. 72 կ. գումարով։ Իսկ միւս ծախսերը կատարված են յարաբերական չափով, նայած նախահաշվի յօդուածներին և յատուկ նվիրաբերութեանց կամ ծախսելիք գումարների պահանջներին, որպիսի գործառնութիւններն ակներև երևում են տեղեկագրիս կցված մանրամասն հաշվից, ուստի և աւելորդ է դոցա մասին ևս կանգ առնել այստեղ մի առ մի։

Մուտքում ուշադրութեան արժանի են առանձնապէս պահեստի ու վիրաւոր զինուորների և նրանց ընտանիքների օգտին գանձված 76 ր. 15 կոպէկը, որից 68 ռուբլի 15 կոպէկը մեծարգոյ տիկին Հռիփսիմէ Մին. Մնացականեանն ու օրիորդ Պարաքսիա Յովհ. Փանեանցն են հանգանակել տիկինների շրջանում, Վարչութեան խնդրանքը և յանձնարարութեամբ, և պատահական եկամուտներից գոյացած գումարը 32 ր. 05 կոպ., ընդամենը՝ 108 ր. 20 կ.։

ՀԱՇԻՎ

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻ ՃԻՒՂԻ

1914 Թ.

1.	Ճիւղին պատկանող յատուկ գումարներն են.—				
	ա. պ. Գարեգին Մարութեան Մելիք-Մարութեանցի նուիրագրամը . . .	1000	—		
	բ. Սեպհական շինութեան ֆոնդ	1000	—		
2.	գ. Մնայուն ֆոնդ, 1913 թուի %%-ով . .	77	97	2077	97
	1913 թուի գրամարկղի մնացորդը, առ 1-ն յունուարի 1914 թ.			37	96
3	Անդամավճարներ 1914 թուի համար 132 հոգուց . . . . . 2 ր.			264	—
4.	ՆՒԷՐՆԵՐ.—				
	Ա.—«Զոկական երեկոյթ»-ներից				
	I. Թիֆլիզից, բժ. պ. Արիստ. Հ. Զարգարեանցի միջոցով— ա. Ճիւղի կարիքների օգտին 60 ր.— բ. Ներքին-Ագուլիսի չքաւորներին բաժանելու . . . . . 60 ր.—	120			
	II. Մոսկուայից, պ. Կարէն Ս. Միքայէլեանցի միջոցով	100	—		
	Բ. Գրադարանի համար գրքեր գնելու.				
	Պ. Սարգիս Թ. Հախնազարեանից—հանգուցեալ կնոջ տիկ. Նունէ Հայր. Հախնազարեանցի յիշատակին	100	—		
	Գ. Ճիւղի կարիքների օգտին				
	I. Պ. Տիգրան Յովհ. Բէգլարեանից—Մերվում հանգանակած . . . 22 ր 50 կ.				
	II. Պ. Աւետիս Մահտեսի-Ստեփանեանից—Ռստամքուլայում (Պարսկաստան) հանգանակ. . . . . 4—40	26	90		
	Դ. Ընթերցարանի օգտին.				
	1.—Տիկ. Նինո Փ. Զարգարեանից 2 ր.—				
5.	2.—Տ. Աստղիկ Գ. Ունանեանից 2 ր.—				
	3.—Պ. Սեդրակ Ունանեանից . 2 ր.—	6	—	352	90
	Յուլիսի 20-ին ս. Թովմա Առաքելոց վանքի բակում կազմակերպուած զբօսանքի եկամուտը			116	24
	Փոխանցումն			2849	07

1.	Ճիւղին պատկանող յատուկ գումարներն են.—				
	ա. Պ. Գարեգին Մարութեան Մելիք-Մարութեանցի նուիրագրամը	1000	—		
	բ. Սեպհական շինութեան ֆոնդը	1000	—		
	գ. Մնայուն ֆոնդը, առ 1-ն յունու. 1914 թ.	77	97		
	Այս ֆոնդի օգտին պահւած է 14 թուի 10%-ը	51	—		
	Խնայ. գանձարանից ստացած %% 14 թուի համար	4	30	2133	27
2.	Գրադարան-ընթերցարանին.—				
	1.—Լրագրների բաժնեգին	81	50		
	2.—Գործավարութեան	80	—		
	3.—Գրքերի կազմերի	46	55		
	4.—Բնակարանի վարձագին	40	—		
	5.—Ծառայողների	34	—		
	6.—Վառելիքի և լուսաւորութեան . .	22	34	304	39
3.	Պ. Սարգիս Թ. Հախնազարեանցի նուիրած գումարով հանգ. տ. Նունէ Հ. Հախնազարեանցի յիշատակին գնւած են գրքեր գրադարանի համար	92	70		
	Երկաթուղու, բեռների և այլ ծախսերի .	4	10	96	80
4.	ՆՊԱՍՏՆԵՐ ԵՒ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.				
	Ա. Զքաւորներին.				
	ա. Ներք.-Ագուլիսում բաշխւած է 60 ր.—				
	բ. Վեր.-Ագուլիսում բաշխւած է 25 ր.—				
	գ. Վ.-Ագուլ. տրւած է գաղթ.-երին 10 ր.—	95	—		
	Բ. Վիրաւոր եւ պահեստի զինուորների օգտին				
	ա. Վիրաւորների օգտին փոխադրւած է խորհրդին . . . . . 68 ր. 15 կ.				
	բ. Պահեստիների կանանց տրրւած է նպաստ . . . . . 10 ր.—	78	15		
	Գ. Դպրոցի չքաւոր աշակերտութեան				
	Դպրոցական զգեստի, զգեստի կտորների և ոտնամանի	38	57		
	Դ. Վեր.-Ագուլիսի դպրոցին—նպաստ				
	Նոր շինւելիք դպրոցական նստարանների օգտին	25	—		
	Փոխանցումն			2534	46

	Փոխանցումն			2849	07
6.	Յատուկ գումարների տոկոսիք.—				
	1.—Շինութեան ֆոնդից	60	—		
	2.—Մելիք-Մարութեանի գումարից .	50	—		
	3.—Մնայուն ֆոնդից	4	30	114	30
7.	Պահեստի և վիրաւոր զինուորների օգտին գանձած է տիկ. Հռիփսիմէ Մ. Մնացականեանցի ու օր. Պարաքսիա Յ. Փանեանցի և վարչութեան միջոցով .			76	15
8	Պատահական եկամուտներ.—				
	1.—Հին լրագրների վաճառումից . .	11	30		
	2.—Զբօսանքից մնացած լիմոնադից .	9	15		
	3.—Թղթէ լապտերների վաճառումից	5	70		
	4.—Ընթերցարանի լամպից օգտուելու վճար	3	90		
	5.—Մէկ հատ 30-անոց հին լամպի վաճառումից	2	—	32	05
9.	Գրադարան-Ընթերցարանի վճար.—				
	1.—Ոչ-անդամներից	14	70		
	2.—Ճիւղի անդամներից	8	70		
	3.—Մուտք վճարներից	5	11	28	51
10.	Բարեգործական և Հրատարակչական ընկերութեանց հրատարակած գրքերի վաճառումից			5	81
				3105	89

Նախագահ վարչութեան՝

Անդամ-գանձապահ՝

	Փոխանցումն			2534	46
	Ե. Պեատիգորսկի ուսուցչական հանրակացարանին				
	Տրուած է միանուագ նպաստ խորհրդի միջոցով	10	—	246	72
5.	Ճիւղի 1913 թ.ի տեղեկագրի տպագրութեան ծախքը			35	—
6.	Ընկերութեան 5% ֆոնդին, ուղարկուած խորհրդին			25	50
7.	Պետր. Հեռագ. Գործակալութ. հեռագրների մէկ ամսավճար			25	—
8.	Դիւանական ծախսեր.—				
	ա. Փոստային ծախսեր	13	98		
	բ. թուղթ, մատիտ, օրացոյց, թանաք	2	45		
	գ. Գնուած պիտոյքներ	1	86	18	29
9.	Գրադարանի համար ստացուած գրքերի ճանապարհածախս			8	86
10.	Յուլիսի 20-ի զբօսանքի լրացուցիչ ծախսեր			5	51
				2899	34
	Դրամարկղի մնացորդ առ 1-ն յուն. 1915 թ.			206	55
				3105	89

Պօղոս Աղամիրզեանց

Գր.-Ղազարեանց

1914 թւի Յուլիսի 20-ի զբօսանքի առիթով ստացուած են նաև.—				
Ա. Պատուաւոր տոմսերից				
1.—Աւ./Տուն Հախն., Աբ., Ներս. և ընկ-ից	10	—		
2.—Մեծ. պ. Խուդի Էլչիբէգեանից . . .	10	—		
3.— » պ. Սարգիս Աբիեանից . . .	5	—		
4.— » պ. Տելեմաք Ս. Բաղդիեանից . .	3	—		
5.— » պ. Սոլոմոն Մ. Սուլխանեանից	3	—	34	—
6.— » պ. Վահր. Ալ. բժ. Այվազեանից	3	—		
Բ. Նուէրներ.				
1.—Բարձրապատիւ տ. Սիօն վարդապետից	3	—		
2.—Զբօսանքի մուտքում, զանազան անձերից	4	50	7	50
			41	50

Ճիւղի հաշիւների ընդհանուր պատկերը				Նախահաշիւով	
Ա. տարի, 1912 թւին եղել է.	Մուտք	223	—	170	—
	Ելք	95	13	170	—
	Մնացորդ	127	87		
Բ. տարի, 1913 թւին —	Մուտք	2730	23	401	—
	Ելք	2692	27	401	—
	Մնացորդ	37	96		
Գ. տարի, 1914 թւին—	Մուտք	3105	89	2583	50
	Ելք	2899	34	2583	50
	Մնացորդ	206	55		
Դ. տարի 1915 թ. նախահաշիւը	Մուտք յատուկ գում.			2830	—
	Ելք » »			2830	—

Գանձապահ՝ Գր. Ղազարեան

ՑՈՒՑԱԿ

ԿՈՎԿ. ՀԱՅՈՑ ԲԱՐ. ԸՆԿԵՐՈՒԹ. ՎԵՐ.-ԱԳՈՒԼԻՍԻ ՃԻՒՂԻ

1914 թՒԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ.

1. Աբիեան Աւ. տիկ. Սոֆիա
2.— » Գր. Ալեքսան
3.— » Ալ. Մուշեղ
4.—Աղամիրզեան Յովհ. Պօղոս
5.— » Յովհ. տիկ. Եաղուբ
6.— » Պօղ. Մկրտիչ
7.— » Կար. բժ. Շմաւոն
8.— » Ցակ. տիկ. Ռոզալիա
9.— » Մկրտչ. Յովհաննէս
10.— » Գաբր. տիկ. Մարիամ
11.— » Ցովհ. տիկ. Նունէ
12.— » Մկրտչ. Ստեփան
13.—Աղամալեան Ս. տիկ. Գիւլիզար
14.—Ասլանեան Ալեքսան
15.— » Կար. Ստեփան
16.—Աւետիսեան Սար. տ. Բալասան
17.— » Առաք տիկ. Նւարդ
18.— » Պօղ. տիկ. Աստղիկ
19.— » Ոսկ. Սարգիս
20.— » Պետր. օր. Արաքսիա
21.— » Պետր. Ալեքսան (Սաշա)
22.—Աւագեան Սամս. տիկ. Նունուկ
23.—Արասխանեան Թ. Իւան
24.—Բաղդիեան Յովս. տ. Հռիփսիմէ
25.— » Ցար. տիկ. Գայիանէ
26.— » Թովմ. Հմայեակ
27.— » Սար. Տելեմաք
28.— » Սար. Արիստակէս
29.—Բարխուդարեան Պետր. տիկին Շուշանիկ
30.— » Մարտ. տիկ. Մարթա
31.— » Կար. Գասպար
32.— » Մ. Ցարութիւն (Արտեմ)
33.—Բէգլարեան Յովհ. Տիգրան
34.—Բեղիրգանեան Պետրոս
35.—Գասպարեան Աւ. Միհրան.
36.—Գէորգեան Գ. Ցարութիւն
37.— » Առաք. տիկ. Կատարինէ
38.— » Սար. տիկ. Նունէ
39.— » Ցար. Հայկ
40.— » Ցար. Արփիար
41.— » Ն. բժ. Վահան
42.— » Ն. Յովհաննէս
43.— » Պատ. տիկ. Սոֆիա
44.— » Մին. տիկ. Սոնիա
45.— » Խաչ. Ցովհաննէս (Վանուշ)
46.— » տիկ. Մարգարիտ
47.— » Միրզաջան
48.—Եարեւելեան տիկ. Շուշանիկ
49.—Եսայեան Մկ. բժ. Բենիամին
50.—Զարգարեան Փ. տիկ. Նինօ
51.— » Ն. տիկ. Գենի
52.— » Արշ. Ստեփան
53.— » Քր. տիկ. Եղիսաբէթ
54.— » Գր. Զաքարիա
55.— » Համ. տիկ. Հեղինէ
56.— » Ահ. Հայկ
57.—Ջիրկիլեան Կար. տիկ. Վարիա
58.—Էլիչիրէգեան Կար. տիկ. Մանի
59.— » Զաքարիա
60.—Թումեան Գէորգ
61.—Լեկրեան Յովհ. տիկ. Անիկօ
62.— » Աւետիս
63.—Խանդուլեան Ցակ. տ. Մատիլդա
64.—Խոսրովեան Խոսրով
65.—Խոջամիրեան տիկ. Սաթենիկ
66.—Խոջամիրեան տիկ. Գենոֆէ
67.— » Մին. Յովհաննէս
68.—Խուրշուդեան Մկրտիչ
69.—Կազազեան Մին. տ. Աստղիկ

100/1599
Հ.Ս.Խ.Հ. ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Հ.Բ.Հ. Публичная Библиотека
7/XI 1922
Имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
Ռ51-57

70.—Կարապետեան Մկ. Ստեփան
71.—Կոստանդինեան Հայկ
72.—Հախնազարեան Թ. Սարգիս
73.— » Յովհ. տիկ. Նազլու
74.— » Զաք. Ստեփան
75.—Ղազարեան Ղազ. Գրիգոր
76.—Ղալամքարեան Թովմ. տիկին Փառանձեմ
77.—Ղարիբջանեան Յովհաննէս
78.— » Առաք. Աւետիս
79.— » Թովմ. Տելեմաք
80.—Մարգարեան Նազ. տ. Աննման
81.— » Սար. տիկ. Անոյշ
82.— » Կար. Յովհաննէս
83.— » Ն. Մինաս
84.—Մելքումեան օր. Մարիամ
85.—Մելիք-Մարութեան Գարեգին, հայր.
86.— » Յակ. տ. Հայկանդուխտ
87.— » Գար. օր. Արծուիկ
88.— » Գար. Գրիգոր
89.— » Գար. Գարեգին, որդի
90.— » տիկ. Աննա
91.—Միքայէլեան Քր. օր. Յուլիանէ
92.— » Կար. Տիգրան
93.—Մսրխանեան Առաք. Սարգիս
94.—Յակոբեան Յովհ. տ. Մանուշակ
95.—Ներսիսեան Յովհ. տ. Անուշկա
96.— » Ենոք. տ. Զումբուխտ
97.— » Յար. տիկ. Արփենիկ
98.— » Առաք. Աւետիս
99.— » Ներս. Յովհաննէս
100.—Նուսնուսեան Մինաս
101.—Ունանեան Գար. տիկ. Աստղիկ
102.— » Սեդրակ
103.—Պետրոսեան Յ. տիկ. Ալմաստ
104.— » Խ. տիկ. Հերիքնազ
105.— » Խաչ. տիկ. Եղիսաբէթ
106.— » Մարտ. Կարապետ
107.— » Մարտ. Պետրոս
108.—Սարգսեան Թովմ. տ. Նունուկ
109.—Սաֆրազեան Յովհ. տ. Եղիսաբ.
110.— » Մանու. Համազասպ
111.— » Համ. Սաֆրազ
112.—Սուլխանեան տիկ. Մարիամ
113.—Սեւումեան Մկ. տ. Զումբուխտ
114.—Սարմսաղամին Թաշմազբաև
115.—Վաչեան Յ. Յովհաննէս
116.—Տէրեան Մին. տիկ. Կատարինէ
117.— » Աւ. Աղեքսանդր
118.—Տէր-Զաքարեան Մկ. Յովհաննէս
119.— » Մկ. Զաքարիա
120.— » Զաք. Գուրգէն
121.— » Դաւիթ
122.—Տէր-Խաչատրեան տ. Հռիփսիմէ
123.—Տէր-Միքայէլեան Կար. տ. Սոֆ.
124.— » Ստ. Մարտիրոս
125.—Տէր-Յակովբեան Գար. Յակովբ
126.—Տէր-Յովհաննիսեան Շահն. տիկ. Գայիանէ
127.—Փանեան Մին. տիկ. Շուշանիկ
128.— » Խաչ. օր. Աստղիկ
129.— » Սար. Ալեքսան
130.—Քալանթարեան Ս. տ. Սաթենիկ
131.— » Սար. տիկ. Գայիանէ
132.— » Խաչ. Յարութիւն.

ՎԵՐՍՏՈՒԳՈՒԹԻՒՆ

Վարչութիւնը փակելով 1914 թւի դրամական հաշիւները, Կան. VIII §62-ի համաձայն, ներկայացրել է այդ Վերաստուգիչ Յանձնաժողովի քննութեան ու ստուգութեան։ Յանձնաժողովը ծանօթանալով և մանրազնին քննութեան ենթարկելով այդ հաշիւը կազմել է հետևեալ արձանագրութիւնը.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

28-ն փետրուարի, 1915 թ., վերին-Ագուլիս

Վերստուգիչ Յանձնաժողովս, համաձայն կանոնադրութեան VIII §62-ի, այսօր ժամը 3-ին ժողով գումարելով քննութեան ենթարկեց Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան Վերին-Ագուլիսի ճիւղի 1914 թւի դրամական հաշիւները։

Ժողովին ներկայ էր նաև վարչութեան անդամ-գանձապահ պ. Գրիգոր Ղ. Ղազարեան, որ տալիս էր հարկաւոր բացատրութիւնները։

Յանձնաժողովիս քննութեանն էին ներկայացրած Վարչութեան գործածած բոլոր մատեաններն ու ցուցակները։

Մանրազնին քննութեան ենթարկելով այդ ամենը, Յանձնաժողովս գտաւ.—

1. Հաշիւները բոլորը կանոնաւոր են։ Վարչութիւնն իւր ամբողջ գործավարութիւնը և հաշուարարութիւնը 1914 թւին ևս վարել է խնամքով ու օրինակելի մաքրութեամբ։

2. Ելքի յօդուածները, համարների կարգով, վաւերացած են իրանց համապատասխան արդարացուցիչ փաստաթղթերով,—ինչպէս նաև մուտքի իւրաքանչիւր յօդուածի դիմաց ցուցադրուած են գումարների ստացման համար տրուած անդորրագրերի համարները, որով և միանգամայն դիւրացրած են դոցա ստուգութիւնն ու քննութիւնը։

3. Հաշուետու տարւայ — 1914 թւի — սկզբին ճիւղն ունեցել է յատուկ գումարներ 2077 ր. 97 կոպ. և դրամարկղում կանխիկ դրամ—37 ր. 96 կոպ. ընդամենը 2115 ր. 93 կոպ.։ Տարւայ վերջին յատուկ գումարները դարձել են 2133 ր. 27 կոպ., կանխիկ գումար էլ դրամարկղում եղել է—206 ր. 55 կոպ.—ընդամենն, ուրեմն, 2339 ր. 82 կ., ըստ որում 1914 թւի գործունէութիւնից յետոյ ճիւղի գումարներն աւելացել են 223 ռուբլի 89 կոպ.։

Այս հանգամանքն արդէն ապացոյց է այն կենսունակ եռանդի ու ջանքերի, որ գործ է դրել վարչութիւնը իր աշխատանքն այդքան արդիւնաւէտ դարձնելու, որպիսի պարագան անպայման արժանի է ուշադրութեան և խորին շնորհակալութեան։

Յանձնաժողովի անդամներ
Մինաս Նուսնուսեան
Յովհաննէս Տէր-Զաքարեան
Յարութիւն Քալանթարեան

ԱՄՓՈՓՈՒՄՆ

Լսելով վերստուգիչ Յանձնաժողովի սոյն արձանագրութիւնը, Վարչութեան 1914 թուի դրամական հաշիւների քննութեան մասին, և դիտողութեան առնուած հանգամանքների ու շնորհակալութեան դէմ ոչինչ չունենալով առարկելիք, Վարչութիւնս այսու աւարտում է ու փակում իւր 1914 թուի գործունէութեան սոյն տեղեկագիրը, փոխադարձաբար խորին շնորհակալութիւն յայտնելով վերստուգիչ Յանձնաժողովին՝ նրա ուշադրութեան և գործ դրած նախանձախնդիր աշխատանքի համար։

Նախագահ Վարչութեան՝ Պօղոս Ադամիրզեան

Անդամ Վարչութեան՝ Միհաս Մարգարեան

Փոխ-անդամներ { Գայիանէ Քալանքար / Գայիանէ Տեր-Յովհաննիսեան

Գանձապահ-Քարտուղար-Անդամ Վարչութեան՝ Գր. Ղ. Ղազարեան

5 Մարտի, 1915 թ.
Վերին-Ագուլիս

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ
S.S.S.R. Publication Biblioteka
7/XI 1922
ԱՌԱՋԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԿԱՆՈՆՆԵՐ

ԿՈՎ. ՀԱՅ. ԲԱՐԵԳՈՐԾ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԵՐ.-ԱԳՈՒԼԻՍԻ ՃԻՒՂԻ

ԳՐԱԴԱՐԱՆ-ԸՆԹԵՐՑԱՐԱՆԻ

Ա. Գրադարանի

1. Գրադարանի բաժանորդները իրաւունք ունին ձրիաբար յաճախելու նաև ընթերցարան։

2. Ճիւղիս անդամների ընտանիքներն ևս կարող են օգտուել գրադարան-ընթերցարանից—ծնողների անունով ու նոցա բաժնեվճարով։

3. Գրքերը տանը կարելի է պահել—ոչ աւելի, քան երկու շաբաթ ժամանակով։

4. Իւրաքանչիւր անգամ կարելի է վերցնել երկու գիրք։

5. Երկուսից աւելի գիրք վերցնելիս պիտի տալ կրկնակի բաժնեվճար։

6. Գրադարանի բաժանորդները միշտ կարող են—պարբերաբար—իրանց մօտ ունենալ երկու գիրք, որ չի կարելի պահել տասնեհինգ օրից աւելի։

7. Իւրաքանչիւր կորցրած կամ փչացրած գրքի համար բաժանորդը վճարելու է գրքի մէկ ու կէս արժէքը, հաշուելով նաև կազմի գինը։

Բ. Ընթերցարանի

1. Առանց թոյլտուութեան և մատեանում նշանակելու ոչ մի լրագիր կամ հանդէս չի կարելի տուն տանել ընթերցարանից։

2. Օրաթերթերի, շաբաթաթերթերի և ամսագրերի վերջին համարները, որոնք դեռ ևս դրած կը լինեն ընթերցարանի սեղանի վրայ, տուն տանել արգելւում է խստիւ։

3. Տուն տանել կարելի է միայն հին—պահուած համարներից, պահանջելով այդպիսիները ընթերցարանի կառավարչից, կանխաւ նշանակելով մատեանում նոցա համարները։

4. Լրագիրներից տուն տանել կարելի է իւրաքանչիւր անգամ ոչ աւելի՝ քան երեք համար, շաբաթաթերթերից—երկու համար, իսկ ամսագրերից կամ յաւելուածներից—պրեմիաներ—մէկ մէկ համար միայն։

5. Տուն տարուած օրաթերթերը կարելի է պահել ոչ աւելի՝ քան երկու օր, շաբաթաթերթերը—չորս օր, իսկ ամսագրերը կամ յաւելուածները—մէկ շաբաթ։

6. Օրաթերթերը, շաբաթաթերթերը, ամսագրերը կամ յաւելուած գրքերը փչացնողը կամ կորցնողը պարտաւոր է այդ համարները բերել տալ

իւր հաշուով, կամ վճարել այդ հրատարակութեան ամբողջ տարեայ բաժնեգինը։

7. Ով ընթերցարանին չի բաժնեգրուած, կամ ամսավճար չի տուել, իրաւունք չունի որ և է գիրք, հանդէս կամ լրագիր տանել տուն։

Գ. Բաժնեգրութեան պայմանները.

1. Թէ գրադարանի և թէ ընթերցարանի բաժնեգրութեան պայմանները նոյնն են։

2. Ճիւղի անդամների համար—1 բուբլի տարեկան, կամ
» 10 կոպէկ ամսական.

3. Ոչ-անդամների համար —2 բուբլի ամսական, կամ
» 20 կոպէկ ամսական.

4. Ամառային սեզոնի վճարը —I անդամների համար՝ 30 կոպէկ,
» » II Ուսանողների համար՝ 30 կոպէկ,
» » III Ոչ-անդամների համար՝ 50 կոպէկ։

5. Մուտքի վճարը—բոլորի համար անխտիր՝ մէկ կոպէկ է, որ ոչ-բաժանորդները իւրաքանչիւր անգամ պէտք է գցեն ընթերցարանի թիթեղեայ փակ արկղի մէջ, մուտքի մօտ։

Ը. Ընդհանուր կարգ.

1. Գրադարան-ընթերցարանին բաժանորդ, ինչպէս նաև Ճիւղին անդամ կամ նուիրատու կարելի է գրուել ամեն օր, Վարչութեան գրասենեակում։

2. Գրադարան-ընթերցարանը բաց է լինում ամեն օր, առաւ. ժ. 8—1 և ցերեկ. ժ. 3—6-ը, ձմեռները՝ առաւ. ժ. 9—2 և ցերեկւայ ժ. 4—5-ը։

3. Գրքեր վերադարձնել կամ ստանալ կարելի է—երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը—կէս օրից յետոյ։ իսկ ամառը՝ ամեն օր, մինչև ճաշ։

4. Գրադարան-ընթերցարանում պահանջւում է պահպանել միշտ պատշաճաւոր կարգ և լռութիւն։

5. Գրադարան-ընթերցարանում արգելւում է ծխել կամ թքել յատակի վրայ։

Խնդրւում է ընդհանրապէս հետևել մաքրութեան պահպանութեան։

2013